ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-20-8/5-1

ք. Երևան 27.05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անտարես» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայության մատուցման արդյունքում ստացված ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3,291,991 (երեք միլիոն երկու հարյուր իննսունմեկ հազար ինը հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __10__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Անտարես» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան Մաշտոցի 50 Ա/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 193032650660100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02519531
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Ե. ՅԻԼՉՅԱՆ	Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-8/5-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի		
h/h	անվանումը	տեխնիկական բնութագիրը
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Հետախույզի դիտամատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 14,5x20,0սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
9	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Հետախուզության տեսադիտամատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 14,5x20,0սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Զորամասի մարտական հերթապահության հանձնման-ընդունման մատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
14	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Վաշտի հիվանդների գրանցման մատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափը ՝ 14,5x20,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Վաշտի արձակվածների մատյան/	50 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 14,5x20,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կպցված բլոկի կռնակին մեջկար եղանակով՝ մետաղալարով, 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
29	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Մարտական թերթիկ/գունավոր//	Չափը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրված՝ 1 մ2 մակերեսի 80գ զանգվածով օֆսեթ թղթով, տպագրությունը գույնավոր ՝ 4x0 , օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրությունն իրականացնել՝ ըստ ներկայացված նմուշի և էլեկտրոնային ֆայլի: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
32	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Բժշկական հանձնաժողովի արձանագրությունների մատյան/	200 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 20,5x29,0սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2-րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, ջերմասոսնձված բլոկը թանգիվով միացված կռնակին, կռնակը բումվինիլով 6 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:

33	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյան ձև 5/	200 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը՝ 20,5x29,0սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, ջերմասոսնձված բլոկը թանզիվով միացված կռնակին, կռնակը բումվինիլով՝ 6 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
34	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/20—թ. ծնված քաղաքացիների այբբենական հաշվառման գիրք ձև 2/	200 թերթից, պատրաստի արտադրանքի չափսը ՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից: Կազմը՝ N 5, կազմակողերը կազմարարական ստվարաթուղթ 1,5մմ հաստությամբ՝ պատված 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, շապիկին տպագրություն, բլոկի և կազմակողի միջև ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, ջերմասոսնձված բլոկը թանզիվով միացված կռնակին, կռնակը գործվածքով՝ 6 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
38	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ուսումնասիրման թերթիկ ձև 6/	Չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
42	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ծանուցագիր ձև 13/	Չափսը՝ 14,5x 20,5 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
43	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Կցագրման քարտ/	Չափսը՝ 14,5x 20,5 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
47	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ինքնակենսագրություն (զորակոչային)/	Չափսը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
51	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ծառայողական քարտ հայերեն/	Չափսը՝ 20,5x29,5 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 160 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
83	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Օրացույց սեղանի 2____թ./	14 թերթից, չափսը՝ 20,0x11,5սմ, 1 թերթ 20,0x32,4 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, 14 թերթի տպագրությունը 1 մ2 մակերեսի 220գ զանգվածով colotech թղթով, գունավոր /4+4/, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, իսկ 1 թերթի տպագրությունը 1 մ2 մակերեսի 350գ զանգվածով թղթով, գունավոր /4+0/, օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն, այն մեջտեղում 3,5սմ եռագիծ ակոսումով մաս ունի սեղանին հարմար դնելու համար, վերևի հատվածում բլոկին միանում է 16,5սմ երկարությամբ մետաղյա զսպանակով: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:

Ծանոթություն՝ Էլեկտրոնային ֆայլերը կուղարկվեն պայմանագրի կնքումից հետո հինգօրյա ժամկետում մատակարարի տրամադրված էլեկտրոնային հասցեին, իսկ բնագրանմուշները՝ մատակարարի՝ պատվիրատուին դիմելուց հետո տասնօրյա ժամկետում:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
հ/հ	**անվանումը**	**չ/մ**	**քանակը**	**միավորի գինը (<< դրամ)**	**ընդհանուր գումարը (<< դրամ)**	**Ծառայությունների մատուցումը 2020թ. հունիս-հուլիս**
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Հետախույզի դիտամատյան/	հատ	650	145.84	94,796	650
9	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Հետախուզության տեսադիտամատյան/	հատ	1,000	132	132,000	1,000
12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման	հատ	4,100	204.87	839,967	4,100

	ծառայություն/Զորամասի մարտական հերթապահության հանձնման-ընդունման մատյան/					
14	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Վաշտի հիվանդների գրանցման մատյան/	հատ	1,800	113.33	203,994	1,800
15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Վաշտի արձակվածների մատյան/	հատ	1,800	113.33	203,994	1,800
29	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Մարտական թերթիկ/գունավոր//	հատ	38,000	5.49	208,620	38,000
32	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Բժշկական հանձնաժողովի արձանագրությունների մատյան/	հատ	200	922.95	184,590	200
33	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյան ձև 5/	հատ	200	990	198,000	200
34	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/20—թ. ծնված քաղաքացիների այբբենական հաշվառման գիրք ձև 2/	հատ	200	1,266	253,200	200
38	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ուսումնասիրման թերթիկ ձև 6/	հատ	34,000	4.05	137,700	34,000
42	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ծանուցագիր ձև 13/	հատ	35,000	2.11	73,850	35,000
43	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Կցագրման քարտ/	հատ	60,000	2.1	126,000	60,000
47	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ինքնակենսագրություն (զորակոչային)/	հատ	24,000	4.07	97,680	24,000
51	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ծառայողական քարտ հայերեն/	հատ	10,000	6.6	66,000	10,000
83	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Օրացույց սեղանի 2____թ./	հատ	2,000	235.8	471,600	2,000

Ծանոթություն՝ Ծառայության արդյունքը մատակարարվելու է ՀՀ ք. Երևան, Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ տարածք:

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-8/5-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝						
հ/հ	անվանումը	CPV կոդը	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Հետախույզի դիտամատյան/	79821200/258	94,796	94,796	94,796	94,796	94,796	94,796	94,796
9	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Հետախուզության տեսադիտամատյան/	79821200/259	132,000	132,000	132,000	132,000	132,000	132,000	132,000
12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Զորամասի մարտական հերթապահության հանձնման-ընդունման մատյան/	79821200/262	839,967	839,967	839,967	839,967	839,967	839,967	839,967
14	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Վաշտի հիվանդների գրանցման մատյան/	79821200/264	203,994	203,994	203,994	203,994	203,994	203,994	203,994

15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Վաշտի արձակվածների մատյան/	79821200/265	203,994	203,994	203,994	203,994	203,994	203,994	203,994
29	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Մարտական թերթիկ/գունավոր//	79821200/279	208,620	208,620	208,620	208,620	208,620	208,620	208,620
32	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Բժշկական հանձնաժողովի արձանագրությունների մատյան/	79821200/282	184,590	184,590	184,590	184,590	184,590	184,590	184,590
33	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների հաշվառման մատյան ձև 5/	79821200/283	198,000	198,000	198,000	198,000	198,000	198,000	198,000
34	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/20---թ. ծնված քաղաքացիների այբբենական հաշվառման գիրք ձև 2/	79821200/284	253,200	253,200	253,200	253,200	253,200	253,200	253,200
38	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ուսումնասիրման թերթիկ ձև 6/	79821200/288	137,700	137,700	137,700	137,700	137,700	137,700	137,700
42	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ծանուցագիր ձև 13/	79821200/292	73,850	73,850	73,850	73,850	73,850	73,850	73,850
43	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Կցագրման քարտ/	79821200/293	126,000	126,000	126,000	126,000	126,000	126,000	126,000
47	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ինքնակենսագրություն (զորակոչային)/	79821200/297	97,680	97,680	97,680	97,680	97,680	97,680	97,680
51	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Ծառայողական քարտ հայերեն/	79821200/301	66,000	66,000	66,000	66,000	66,000	66,000	66,000
83	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/Օրացույց սեղանի 2____թ./	79821200/333	471,600	471,600	471,600	471,600	471,600	471,600	471,600

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Անտարես» ՍՊԸ Տնօրեն

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-8/5-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-20-8/5-1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն